


ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ  
ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մարզկենտրոնը՝ ք. Արտաշատ



*Տարածաշրջանները՝*

Արարատ,  
Արտաշատ,  
Մասիս

*Քաղաքները՝*

Արտաշատ,  
Արարատ,  
Վեդի,  
Մասիս

ՀՀ *Արարատի մարզը* գտնվում է հանրապետության հարավ-արևմտյան մասում: Մարզը *հյուսիսից* սահմանակից է մայրաքաղաքին, ՀՀ Արմավիրի և Կոտայքի մարզերին, *արևելքից՝* ՀՀ Գեղարքունիքի մարզին, *հարավ-արևմուտքից՝* ՀՀ Վայոց ձորի մարզին և *հարավից՝* պետական սահմանով սահմանակից է Թուրքիային և Ադրբեջանին (Նախիջևան):

Տարածքը	2096 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	7.0 %
Քաղաքային համայնքներ	4
Գյուղական համայնքներ	93
Քաղաքներ	4
Գյուղեր	94
Բնակչության թվաքանակը 2010թ. հունվարի 1-ի դրությամբ	278.8 հազ. մարդ
<i>այդ թվում՝</i>	
քաղաքային	82.2 հազ. մարդ
գյուղական	196.6 հազ. մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2009թ.	8.6 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	29.5 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	156706 հա
այդ թվում՝ վարելահողեր	26953 հա

**Վարչատարածքային բաժանումը 2010թ. հունվարի 1-ի դրությամբ**

	Տարածքը, քառ. կմ	Մայրաքաղաքը/մարզկենտրոնը	Բնակչության խտությունը, մարդ/կմ <sup>2</sup>	Համայնքներ	
				քաղաքային	գյուղական
Հայաստանի Հանրապետություն	29743	Երևան	109	48	866
ՀՀ Արարատի մարզ	2096	Արտաշատ	133	4	93

**ՀՀ Արարատի մարզի քաղաքները**

*(հունվարի 1-ի դրությամբ)*

Քաղաքի անվանումը	Քաղաքի կարգավիճակ ստանալու տարեթիվը	Հեռավորությունը մինչև Երևան, կմ	Մշտական բնակչության թվաքանակը, հազ.մարդ				
			2005	2006	2007	2008	2009
Արարատ	1962	47	20.6	20.6	20.7	20.7	20.8
Արտաշատ	1961	30	25.1	25.2	25.3	25.3	25.4
Մասիս	1995	14	21.8	21.9	22.1	22.2	22.4
Վեդի	1995	48	13.2	13.3	13.4	13.5	13.6

Մարզի տարածքը եղել է պատմական Հայաստանի Այրարատ նահանգի Ոստան գավառի մի մասը: Վերջինիս տարածքում են գտնվել պատմական հին Հայաստանի երկու (*Արտաշատ և Դվին*) մայրաքաղաքները:

*Արտաշատը* (մ.թ.ա. II դ., 180թ.) գտնվել է Երասխա և Մեծամոր գետերի հին հունների միախառնման տեղում՝ Խոր Վիրապի բլուրների վրա և շրջակայքում, այժմյան Արտաշատ քաղաքից 10 կմ հարավ-արևելք: Գտնվելով Արարատյան բարեբեր դաշտավայրում, առևտրական ճանապարհների հանգույցում, քաղաքը եղել է ոչ միայն Հայաստանի, այլև Արևելքի առավել զարգացած քաղաքներից մեկը և մայրաքաղաքի դեր կատարել շուրջ 500 տարի: Հայ ժողովրդի պատմության մեջ ոչ մի քաղաք այնպիսի նշանակալից հետք չի թողել, ինչպես Արտաշատը:

**Գվին** մայաքաղաքը հիմնադրվել է IV դարի 30-ական թվականներին, երբ հայոց Խոսրով Կոտակ թագավորը (330-338թթ.) արքունիքը Արտաշատից տեղափոխելով Գվին, այն հայտարարել է նոր մայրաքաղաք: Գվինն այդ ժամանակաշրջանում Հայաստանի ոչ միայն քաղաքական ու տնտեսական, այլև հոգևոր ու մշակութային կենտրոնն էր (պահպանվել են կաթողիկոսարանի դահլիճի, դիվանատան, ճեմարանի, գանձատան, մատենադարանի հետքերը, ինչպես նաև հեթանոսական տաճարի տեղում կառուցված Կաթողիկե եկեղեցին): Գվինը եղել է նաև միջազգային առևտրի խոշոր կենտրոն: Այստեղ են հատվել միջազգային 4 մայրուղիներ՝ Կովկաս ու Հարավային Ռուսաստան, Փոքր Ասիա ու Հարավային Եվրոպա, Հյուսիսային Աֆրիկա ու Բյուզանդիա, Միջագետք ու Միջին Ասիա:

**Խոր Վիրապ վանք-ամրոցը** գտնվում է մարզի Փոքր Վեղի գյուղի մոտակայքում, բլրի վրա: Հնում այն եղել է պատմական Արտաշատ քաղաքը, իսկ Խոր Վիրապի բլուրներին՝ միջնաբերդը:

Ներկայիս վանք-ամրոցի տեղում եղել է արքունի բանտը: Խոր Վիրապը օձերով, թունավոր միջատներով լի մի խոր փոս էր, ուր գցում էին դատապարտյալներին:

Ըստ Ագաթանգեղոսի և մյուս պատմիչների՝ Գրիգոր Լուսավորիչը 13 տարի այս վիրապում է կրել իր չարչարանքները: Ի հիշատակ Սրբի չարչարանքների 5-րդ դարում այս Սբ. վիրապի վրա վանք է հիմնվում և հաստատվում միաբանություն, իսկ Ներսես Շինարար կաթողիկոսը Սբ. վիրապի վրա նոր եկեղեցի է կառուցում:

Խոր Վիրապ դպրության կենտրոնը 13-րդ դարում ունեցել է վարդապետատուն՝ մոտ 40 աշակերտով, ուսուցչապետեր՝ Վարդան Արևելցին, Հովհաննես Երզնկացին, Ներսես Մշեցին:

Դպրության կենտրոն լինելուց բացի 10-11-րդ դարերում այն ռազմական կարևոր հենակետ է եղել հայ ժողովրդի համար:

930-ական թվականներին Հայաստան արշաված արաբական բանակի դեմ հայոց զորքը ճակատամարտ է մղել Աբաս Բագրատունի և Գագիկ Արծրունի հայոց արքաների գլխավորությամբ: Խոր վիրապի մոտ տեղի ունեցած վճռական ճակատամարտում հայկական միացյալ զինուժը գլխովին ջախջախում է արաբական 13 հազարանոց բանակը:

1970-80 թթ. Խոր վիրապում կատարված վերանորոգման աշխատանքներից հետո պարսպի հարավային հատվածի թաղածածկ նկուղի վրա կառուցվել է դիտակետ, որտեղից բացվում է Արարատ լեռան վեհաշուք համայնապատկերը:

Մարզի տարածքում են գտնվում *Սբ. Հակոբ եկեղեցին*, *Քեղվա ամրոցը* (XI դ.), ինչպես նաև *Պարույր Սևակի տուն-թանգարանը* (գ. Չանգակատուն):

**Խոսրովի պետական արգելոցը** («Խոսրովի անտառ») է կոչվել Խոսրով Բ Կոտակ թագավորի անվամբ) գտնվում է Հարավային Հայաստանի կենտրոնական մասում: Ընդգրկում է 27 հա տարածություն, գտնվում է ծովի մակերևույթից 1600-2300 մ բարձրության վրա:

## Տնտեսությունը

**ՀՀ Արարատի մարզը** հանրապետության տնտեսապես զարգացած մարզերից է:

Տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն է: Այն հիմնականում մասնագիտացած է խաղողագործության, պտղաբուծության և բանջարաբուծության մեջ:

Մարզի տարածքով է անցնում հանրապետական նշանակության Երևան-Երասխ-Ղարաբաղ ավտոմայրուղին և Երևան-Երասխ երկաթուղին:

2009թ.-ին մարզի տնտեսության հիմնական ճյուղերի տեսակարար կշիռները հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 8.7%,
- գյուղատնտեսություն՝ 16.0%,
- շինարարություն՝ 3.1%,
- մանրածախ առևտուր՝ 2.4%,
- ծառայություններ՝ 1.6%:

Տնտեսության հիմքը **գյուղատնտեսությունն է**: Այն հիմնականում մասնագիտացած է խաղողագործության, պտղաբուծության և բանջարաբուծության մեջ:

**Բեռնատրվադրափոխադրումները** մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

**Արդյունաբերության** առաջատար ուղղությունները սննդամթերքի, ներառյալ՝ խմիչքների, արտադրություններն են և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը:

Մարզի բազմաճյուղ արդյունաբերության հիմնական և գլխավոր ուղղությունը **մշակող արդյունաբերությունն է**, որի մեջ առավել զարգացած են հետևյալ երեք ճյուղերը.

- ա) սննդամթերքի և ըմպելիքի արտադրություն (մրգերի, բանջարեղենի վերամշակում և պահածոյացում, թորած ալկոհոլային խմիչքների արտադրություն),
- բ) ծխախոտի արտադրություն (ծխախոտի խմորում՝ ֆերմենտացիա),
- գ) ոչ մետաղական հանքային արտադրանքի արտադրություն (ցեմենտի, կրի, ասբոցեմենտային իրերի արտադրություն, քարի կտրում և վերամշակում):

## Արտաշատ քաղաքը

**Արտաշատ քաղաքը** (2009թ. տարեվերջին՝ 25.4 հազ. բնակիչ) մարզկենտրոնն է: Քաղաքը գտնվում է Երևանից 30 կմ հեռավորության վրա (հայոց պատմական մայրաքաղաք Արտաշատից 10 կմ հյուսիս-արևմուտք), զբաղեցնում է 800 հա տարածություն:

Քաղաքի **արդյունաբերության** հիմնական ուղղությունը **մշակող արդյունաբերությունն** է, որի մեջ հատկապես առանձնանում են սննդամթերքի և ընպելիքի (մրգերի, բանջարեղենի վերամշակում և պահածոյացում, թորած ակոհոլային խմիչքների արտադրություն), ինչպես նաև ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրությունը (կղմինդրի, աղյուսի և թրծված կավից շինարարական արտադրատեսակների, բնական քարերից երեսպատման նյութերի արտադրություն):

Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի նաև **գյուղատնտեսությունը**, որի հիմնական ուղղությունը **դաշտավարությունն** է:

## Արարատ քաղաքը

**Արարատ քաղաքը** (2009թ. տարեվերջին՝ 20.8 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 47 կմ հեռավորության վրա, հիմնադրվել է 1936թ.: Հայտնի է որպես արդյունաբերական կենտրոն:

Քաղաքի **արդյունաբերության** հիմնական ուղղությունը **մշակող արդյունաբերությունն** է, որի մեջ իր գերակշիռ տեղն ունի ոչ մետաղական հանքային և այլ արտադրանքի արտադրությունը (ցեմենտի, կրի և ասբոցեմենտային իրերի արտադրություն):

## Վեդի քաղաքը

**Վեդի քաղաքը** (2009թ. տարեվերջին՝ 13.6 հազ. բնակիչ) գտնվում է Վեդի գետի աջ ափին, Երևանից 48 կմ հեռավորության վրա:

Քաղաքի **արդյունաբերության** հիմնական ուղղությունը **մշակող արդյունաբերությունն** է, որում կարևոր տեղ է զբաղեցնում բնական քարերից երեսպատման նյութերի, էլեկտրական և հսկիչ սարքերի ու սարքավորումների, պլաստմասսաներից պատրաստվող շինարարական իրերի արտադրությունը:

Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի նաև **գյուղատնտեսությունը**, որի հիմնական ուղղությունը **դաշտավարությունն** է:

## Մասիս քաղաքը

**Մասիս քաղաքը** (2009թ. տարեվերջին՝ 22.4 հազ. բնակիչ) գտնվում է Հրազդան գետի ձախ ափին, Երևանից 14 կմ հեռավորության վրա:

Խոշոր երկաթուղային ապրանքային կայան է, որն ունի միջնարգային նշանակություն և սպասարկում է Երևան քաղաքին:

Քաղաքի **արդյունաբերության** հիմնական ուղղությունը **մշակող արդյունաբերությունն** է, որի մեջ գերակշիռ տեղ է զբաղեցնում սննդամթերքի արտադրությունը (մրգերի և բանջարեղենի վերամշակում և պահածոյացում), թղթից և ստվարաթղթից արտադրատեսակների արտադրություն և ծխախոտի ապրանքների արտադրությունը (ծխախոտի խմորում՝ ֆերմենտացիա):

### ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը՝, մարդ	
		2009թ. հունվարի 1-ի դրությամբ	2010թ. հունվարի 1-ի դրությամբ
Արտաշատ	ք. Արտաշատ	25297	25401
Արարատ	ք. Արարատ	20709	20833
Վեդի	ք. Վեդի	13447	13578
Մասիս	ք. Մասիս	22224	22383

### ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը** , մարդ	
			2009թ.հունվարի 1-ի դրությամբ	2010թ.հունվարի 1-ի դրությամբ
1	Աբովյան		1390	1414
2	Ազատաշեն		637	621
3	Ազատավան		3034	3047
4	Այգավան		4440	4470
5	Այգեգարդ		3259	3152
6	Այգեպատ		1554	1545
7	Այգեստան		2360	2269

\* ՀՀ Արարատի մարզի քաղաքային համայնքների բնակչության թվաքանակը ներկայացվել է ընթացիկ հաշվառմամբ:

\*\* ՀՀ Արարատի մարզի գյուղական համայնքների այս տվյալների սկզբնաղբյուրը՝ գյուղական համայնքների կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» պետական վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 866 գյուղական համայնքների մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ ամբողջությամբ և ըստ մարզերի ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության վարչական ռեգիստրների տվյալների վրա (շեղումը՝ 01.01.2010թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +5.1%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գյուղական համայնքների միջև խնդրո առարկա տեղեկատվության փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը** , մարդ	
			2009թ.հունվարի 1-ի դրությամբ	2010թ.հունվարի 1-ի դրությամբ
8	Այնթափ		8213	7989
9	Ավշար		5128	5116
10	Արալեզ		2720	2726
11	Արարատ		7502 <sup>◇</sup>	8190
12	Արաքսավան		836	831
13	Արբաթ		1823	1820
14	Արզավանդ		1593	1600
15	Արմաշ		2665	2678
16	Արևաբույր		1130	1136
17	Արևշատ		2377	2372
18	Բաղրամյան		1945	1950
19	Բարձրաշեն	•Բարձրաշեն •Կաքավաբերդ	1505	1524
20	Բերդիկ		1015	1014
21	Բերքանուշ		1992	2014
22	Բյուրավան		1444	1446
23	Բուրաստան		1902	1910
24	Գեղանիստ		2390	2438
25	Գետազատ		1873	1843
26	Գետափնյա		1266	1339
27	Գինեվետ		696	697
28	Գոռավան		2647	2740
29	Դալար		2561	2540
30	Դաշտավան		2120	2129
31	Դաշտաքար		680	690
32	Դարակերտ		2439	2452
33	Դարբնիկ		1153	1138
34	Դեղձուտ		916	818
35	Դիմիտրով		1257	1249
36	Դիտակ		769	771
37	Դվին		2865	2870
38	Եղեգնավան		1876	1887
39	Երասխ		862	871
40	Զանգակատուն		1187	1189
41	Զորակ		1859	1923
42	Լանջազատ		1353	1336
43	Լանջանիստ		255	250
44	Լանջառ		221	223
45	Լուսաշող		627	635
46	Լուսառատ		2795	2805
47	Խաչվառ		1782	1810
48	Կանաչուտ		1267	1278
49	Հայանիստ		2087	2077
50	Հնաբերդ		650	631
51	Հովտաշատ		3573	3861
52	Հովտաշեն		1120	1115
53	Ղուկասավան		2209	2237
54	Մասիս		1485	1483



	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը** , մարդ	
			2009թ.հունվարի 1-ի դրությամբ	2010թ.հունվարի 1-ի դրությամբ
55	Մարմարաշեն		3383	3395
56	Մխչյան		5089	5086
57	Մրգանուշ		1246	1253
58	Մրգավան		1935	1941
59	Մրգավետ		2347	2340
60	Նարեկ		1238	1261
61	Նիզամի		1486	1494
62	Նշավան		1830	1825
63	Նոյակերտ		2399	2394
64	Նորաբաց		2229	2194
65	Նորամարգ		1629	1743
66	Նորաշեն		3496	3511
67	Նոր Խարբերդ		6095	6140
68	Նոր կյանք		2875	2890
69	Նոր Կյուրին		802	866
70	Նոր ուղի		939	948
71	Շահումյան		4406	4409
72	Շաղափ		1025	1024
73	Ոսկետափ		5311	5363
74	Ոստան		3011	3046
75	Պարույր Սևակ		720	763
76	Ջրահովիտ		1183	1209
77	Ջրաշեն		1791	1798
78	Ռանչպար		1266	1266
79	Սայաթ –Նովա		2070	2141
80	Սիս		1724	1752
81	Սիսավան		2255	2264
82	Սիփանիկ		819	783
83	Սուրենավան		2541	2579
84	Վանաշեն		2480	2664
85	Վարդաշատ		236	234
86	Վարդաշեն		573	580
87	Վերին Արտաշատ		4478	4493
88	Վերին Դվին		2205	2221
89	Տափերական		3882	3889
90	Ուրցալանջ		204	208
91	Ուրցաձոր		3092	3189
92	Փոքր Վեդի		3251	3273
93	Քաղցրաշեն		3130	3099

**ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ԹԱՂԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՄՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2009թ.**

	Շնորհամեր	նրանցից`	
		կանայք <sup>1</sup>	տղամարդիկ <sup>1</sup>
Բնակչությունը, մարդ	10000	5082	4918
Ծնվածներ, մարդ	136	64	72
Մահացածներ, մարդ	79	38	41
Ամուսնություններ	50	X	X
Ամուսնալուծություններ	6	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ	30.3	X	X
Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, մարդ`			
նախադպրոցական	150	76	74
հանրակրթական	1267	611	656
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան-ստեղծագործական կենտրոններ	109	83	26
նախնական մասնագիտական (արհեստագործական)	5	-	5
միջին մասնագիտական	50	23	27
բարձրագույն մասնագիտական	6	4	2
Առողջապահության ոլորտ`			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	29089	...	...
Մարզիկներ, մարդ	59	5	54
Զբաղվածներ, մարդ	4181	...	...
նրանցից` գիտական հիմնարկներում	1	1	0.0
նրանցից` գիտության դոկտոր	0.0	0.0	0.0
գիտության թեկնածուներ	0.0	0.0	0.0
ուսուցիչներ	117	100	17
բժիշկներ	17	...	...
միջին բուժանձնակազմ	40	...	...
Գործազուրկներ /պաշտոնապես գրանցված/, մարդ	118	89	29
Մոցիայական ապահովության ոլորտ			
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1495	...	...
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	3261	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	12253	...	...
թատրոն	509	...	...
համերգ	-	-	-
թանգարան	944	...	...
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	28	X	X
այդ թվում` ոչ մեծ ծանրության	12	X	X
միջին ծանրության	8	X	X
ծանր	7	X	X
առանձնապես ծանր	1	X	X

<sup>1</sup> Ցուցանիշները հաշվարկային են: